# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1950 ՄԱՐՏ – ԱՊՐԻԼ Թիւ 3-4


ԷՋ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ. – Աբրահամ Պետրոս Ա. Կաթողիկոս և Մխիթար Աբբահայր . 49

**ԳՐԱԿԱՆ**

Հ. Յ. Չ. – Զմմառու հայ Վանքին Յոբելեանը . 55

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. – Րաֆֆի (գրական ակնարկ) . 57

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ. – Կեանքս ըլլար . 63

» » » – Մենախօսութիւն Քաջն Վարդանի . . . . . 91

Շ. ՊՈՏԼԵՐ. – Առընչութիւններ (թրգմ. Մառի Աթմաճեան) . . . . . 75

Հ. ՅՈՒՇԻԿ ՊՈՒՇԼԻԿԵԱՆ. – Բեթէօֆի Շանտոր (շար.) . . . . . . 76

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ**

ՃՐՏ. Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ. – Հայկական ռազմաճարտարապետութիւնը (շար.) . . . 64

**ՊԱՏՄԱԿԱՆ**

ՏՈՔԹ. Յ. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ – Բերդուս . . 81

**ԿՐՕՆԱԿԱՆ**

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ. – Անդենական կեանքի հարցեր Հայ եկեղեցւոյ վարդապետութենէն (շար.) . . . . . 84

**ԳՐԱԽՕՍԱԿԱՆ**

Հ. Մ. Ճ. – Արամայիս Սրապեանի «Հանդիպումներ Մուսային հետ». տպ. Վենետիկ – Ս. Ղազար, 1949 . . . . . 93

Հ. Յ. ՊՈՒՇԼԻԿԵԱՆ. – Ռինտ–ի «Որբերը» տպ. Պուէնոս-Այրէս, 1940 . . . . 94


# SOMMAIRE

1950 Mars - Avril N. 3-4


PAGE

**ARTICLE DE FOND**

*P. Mesrop Djanachian.* – Le Catholicos Abraham Pierre I, et l'Abbé Mékhitar . . . . . . . 49

**LITTÉRATURE**

*P. I. Tch.* – Le Jubilé du Couvent arménien Bzommar . . . . . 55

*P. M. Djanachian.* – Raffi (critique littéraire) 57

*P. E. Der-Ghazarian.* – Ma vie . . . 63

» » » – Monologue du héros Vardan . . . . . . 91

*Ch. Baudelaire.* – Correspondances (trad. par Marie Atmadjian) . . . . 75

*P. Houssik Bouchliguian.* – Petöfi Sándor . 76

**BEAUX ARTS**

*Ing. S. Djévahir.* – L'architecture militaire arménienne (suite) . . . . 64

**HISTOIRE**

*Dr. H. Der-Ghazarian.* – Pertusus . . 81

**RELIGION**

*P. Nersès Der-Nersessian.* – Questions de la vie future dans la Doctrine de l'Eglise Arménienne (suite) . . . . . 84

**RECENSION**

*P. M. Dj.* – «Rencontres avec la Muse» ed. St. Lazare, Venise, 1949 . . 93

*P. H. Bouchliguian.* – «Les Orphelins» de Rind, ed. Buenos-Aires, 1940 . . 94



# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 – 1950
108-րդ ՏԱՐԻ

ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ
ԹԻՒ 3 – 4


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԱԲՐԱՀԱՄ-ՊԵՏՐՈՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
## ԵՒ
## ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ

Պատմական զուգադիպում մը՝ տարբեր աստղերու տակ ծնած երկու փառահեղ դէմքերու ԺԸ. դարու Հայ եկեղեցական պատմութեան, որոնք կատարած իրենց դերը, միեւնոյն տարին կ՚անցնէին անմահութեան, 1749 Ապրիլ 27-ին՝ Մխիթար Աբբահայր, եւ Հոկտեմբեր 1-ին՝ Աբրահամ-Պետրոս Ա., անդրանիկ կաթողիկոսը վերանորոգեալ Հայ Կաթողիկէ Համայնքին։ Զոյգ յոբելեաններ՝ որ հրաւիրեցին Հայ Մամուլին ուշադրութիւնն ու յարգանքը անոնց յիշատակին հանդէպ։

Դարձեալ գեղեցիկ ու փրկարար զուգադիպում մը կապած էր այդ երկու մեծ հոգիները 1697-ին, հաւանաբար Պոլսոյ մէջ, երբ Աբրահամ՝ տակաւին որոնելու հետ ճշմարտութեան ուղին, ապագայ մեծ Լուսանորոգէն կը ստանար առաջին ճառագայթումը լոյս հաւատքին, որ ապա իր արշալուսային գունագեղումներէն պիտի ելլէր դառնալու արեւ մը՝ հիմը դնելով Հայ Կաթ. Նուիրապետութեան։ Աբրահամ ինքնին արձանագրած է սա պատմական տողերը. «18 տարեկանին սկսայ ճանչնալ կաթողիկէ ճշմարտութիւնը յարգոյ Մխիթար Աբբայէն՝ որ այժմ կը բնակի Վենետիկ (Ինքնակենսագրութիւն, գրուած 17, Սեպտ. 1720. Գիւան Զմմառու, տուփ 4)։

Այդ արձանագրութենէն երեք տարի առաջ, դարձեալ ուրիշ առիթով մը՝ ան յանձնած է պատմութեան սա տողերն ալ. «Ի մեր յազգէ վերապատուելի Մխիթար Աբբահօրն միաբանք, որ այժմ ի Վենետիկ կան ի վանքն Սրբոյն Ղազարու և ցոյց տան ազգիս մերոյ. (Գիւան Զմմառու, Արկղ Ա. Տումար Բ. Թիւ 28)։

Աբրահամ (ծնած Այնթապ 12 Ապրիլ 1679-ին) գտած էր լոյսի ճամբան. իր միտքը ու հոգին տարուած այլեւս լոյսի վարդապետութենէն՝ կը քալէր կերտելու իր ապագան։ Վեց տարի անընդհատ կը նուիրուի հարստացնելու իր միտքը աստուածաբանա-




© National Library of Armenia